



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 19

— Տ Ե Ա Ր Ա Թ —

7 ՄԱՅԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՑ ՀԱՄԱՐ	ԳԱՒԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՅՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԴՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշտ Պէյ խանին Տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեղիկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջերմապէս կը յանձնաւարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնաւարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիղի 1900 Արուեստահանդեսին մեջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒԹԻՆՆԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճաշսէսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զժգոնութեանց և տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
վիամագլուխ մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և զիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՎԱԹԱՍԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 և 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնկլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՏԱՐ | 2արշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԲԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Փրանկ

ՀԻՐԵՀԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Փրանկ

- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 19


ՇԱՐԱԹ

7 Մայիս 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախանձը անհրաժեշտ է . (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Անցք մը . — ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ : Յուշապատկերներ (Ֆանթազի) . — ՄԱՐԿՈՒԹ : Քեաղքսխանե . — HIRONDELLA : Մայիս մեկ . — ԼԻԼԱ : Քաթոլիկ (Յոգուած-կօշիկ) . — ԵՐԱՆՈՍ : Նրազ (Բանաստեղծութիւն) . — Ս. ԽԱՉՈՒՆԻ : Նրազ (Արձակ փերուած) . — ՎԱՀՐԱՄ ԱՆՈՒՐՁ : Զուարթ ժամեր . — ԶԱԽԱՆ ՄՈՅՐԵԱՆ : 10,000 Տաւի Սառնակոյսի մը մէջ . (Հանրագիտակի բերքօն) LOUIS BOUSSENARD (Թարգմ .) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՆԱԽԱՆՁԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ



Ձեր ամենուրեք գիտցած նախանձը , և անոր զղուելի , անտեղի և այլաների բնոյթը ճանչցուած ըլլալով հանդերձ , չէ՞ք զարմանար երբ դուրսեանս ճակատը մեծատառ կը գրեմ , նախանձը անհրաժեշտ է :

Փորձուած ճշմարտութիւն մըն է թէ , չառ անգամ չարը բարիին կ'առաջնորդէ , այսինքն չարիքը բարիք կը ծնի : Հիւանդութիւններ կան , որոնց դարմանը և միակ բուժումը տեսակ տեսակ թոյներու գործածութեամբ ձեռք կը ձգուի բժշկական աշխարհին մէջ :

Այս կարգէն է նաև նախանձը :

Նախանձը բնոյթ մըն է , որուն ենթական կը տանջուի , կը հալի , կը մաշի . տեսակ մը կը լրծող որդէ ան , որ սիրտը կը ծրծէ , կ'ուտէ , կը փճացնէ :

Թէև այս չար ու այլաների ունակութիւնը ամէն տեղ և ամէն խնդրոյ մէջ իր միջրոպը կրնայ ներմուծել , սակայն մենք , որպէս զի փրկենք մեր վերնագիրը , սրտի խօսինք , անոր ընտանեկան շրջանակին մէջ ունեցած զերկն վրայ յօք :

Շատ անգամ մեր հայ տուններու վրայ խօսելով, կանայք՝ մանաւանդ մանկամարդները, կը գանգատին, առարկելով թէ իրենց ամուսինները խիստ կը վարուին և կը նախանձին :

Այս պարագան նորոյթ մը չէ մեզ համար, քանի որ ամէն ատեն կը լսենք օրինակները :

Նոյնպէս ամուսիններ ալ կան, որոնք իրենց կարգին կը տրտնջան ու կը բողբեն իրենց կիներուն համար, ըսելով թէ՝ կը նախանձին և աչք բանալ չեն իտար :

Այս երկու տարասեռ գանգատներն ալ իրենց կծու երեւոյթին հետ շատ անուշ և գովելի հանգամանք մը ունին, զոր շատ քիչեր թերեւս կը հասկնան, մինչդեռ շատեր, անտանելի կը գտնեն այդ բնոյթը և ենթական կը մեղքնան, փորձանքի մը հանդիպած ըլլալուն վերադրելով :

Իմ մասին պիտի ուղէի որ ամէն կին իր ամուսինէն նախանձեր, և ամէն այր իր կնոջմէն, հակադարձաբար :

Բուն սէրը նախանձն է : Պէտք է նախ ընդունիլ թէ՝ այն կինը որ իր ամուսինը կը նախանձի, զայն կը սիրէ, և այն ամուսինը որ իր կնոջմէն կը նախանձի, զայն չափազանց սիրելուն հետեւանքն է :

Ընտանեկան չըջանալին մէջ երբ նախանձը կը պակսի, ըսել է հոն սէր չկայ : Զի նախանձիլը՝ անտարբերութիւն, պաղութիւն և վերաբերման պակասին յայտարար նշանն է :

Պէտք է ընդունիլ սա բացարձակ ճշմարտութիւնը թէ՝ այն որ կը նախանձի կը սիրէ — անշուտ այր և կնոջ ընտանեկան յարաբերութեանց վրայ խօսելով — և այն որ անտարբեր կը գտնուի իր կեանքի ընկերոջ նկատմամբ, ըսել է որ անոր սիրտին կապերը թուրցած ու զգացումները թմրած փթացած են այլ ևս :

Շատ անգամներ, ըլլայ երեկոյթներու, ըլլայ հանրային դրօտանքներու մէջ, երբ ուշի ուշով դիտէք, պիտի տեսնէք թէ այր և կին զոյգեր, տաքօքէն կը վիճաբանին, կը բարկանան, զիրար կը քննադատեն, կ'այպանեն. գիտցէ՛ք թէ, նախանձի խնդիր մը յարուցած են և որ զիրար համոզել կը ջանան : Ահա այդ զոյգերը վստահ եղէք որ զիրար կատարելապէս կը սիրեն, և թէ, իրենց մէջ անտարբերութիւնը, կեղծիքը գործ չունին :

Բայց, պէտք է անմիջապէս աւելցնենք թէ, ինչպէս ամէն բանի մէջ, նոյնպէս այս պարագային ալ ծայրայեղութեան տանելու չէ խնդիրը :

Ընտանեկան չըջանալի մէջ բարի նախանձը անհրաժեշտ է և չինիչ, իսկ ծայրայեղութիւնը բնաւ տանելի չէ և աւերիչ գոյն մը կ'առնէ տակաւ :

Նախանձը պէտք է տեղին արթննայ, և այն ատեն միայն օգտակար և գովելի կրնայ ըլլալ :

Երջանիկ է այն կինը որուն ամուսինը կը նախանձի, և փոխադարձաբար, երջանիկ է այն ամուսինը որուն կինը նախանձը կ'զգայ ու սիրաւ կ'եփի ի հարկին :

Զի նախանձիլը, ինչպէս վերը ըսինք, անտարբերութեան բացարձակ ապացոյցն է : Երբ կը տեսնէք ամուսին մը, որ, հակառակ ամուսնացած ըլլալուն,

ամուրիի մը հովերը կառնէ և կապրի այնպէս, ինչպէս պիտի ապրէր ոչ ամուսնացեալ մէկը, և որուն կինը առանց զիտուլութիւն մը ընելու, կը ձգէ որ ան իր ընթացքը շարունակէ, զիտուլէք որ այդ կինը իր ամուսնէն պաղած է, զայն չը սիրեր և չի վերաբերուիր իր անով:


Հակադարձաբար երբ կը տեսնէք կին մը, որ իր վարած կեանքով երբեք չի ճանչցներ իր կարգուած ըլլալը, և կը վարէ ազատ կեանք մը, ինչպէս որ պիտի ընէր հասուկ օրիորդ մը, և ասոր ի տես ամուսինը, չ'անդրադառնար, չի վերաբերուիր, զիտուլութիւն անգամ չ'ըներ իր տիկնոջ այդ այսպանելի ընթացքին, զիտուլէք որ սէրը մարած է մարդուն մէջ:

Ես պիտի ուղէի որ այր և կին, երկուքն ալ իրարմէ նախանձէին, չափաւորութեան շրջանին մէջ, որպէս զի իրենց սիրային կապը միշտ ամուր, միշտ ուժով մընար:

Երբ այր և կին իրարու հանդէպ զգան ինչ որ նախանձ կ'անուանի, այն ատեն երջանկութիւնը թեւատարած պիտի հսկէ իրենց ընտանի բոյնին վերև, և երկուքն ալ իրենց զգացումները պահելով պիտի ապրին հանդարտ, թուանց կռիւի, առանց դժգոհութեան:

Երանի թէ ամէն կին նախանձեր իր ամուսինը, և ամէն ամուսին իր կինը հակադարձաբար: Ահա երջանկութեան բանասէն:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ



ԱՆՅՔ ՄԸ

Տառանգներու խորհուրդին մէջ երազուն,
Կին մը կ'անցնի յա՛րազրնայ ու լըռին.
Սուգի զգեստն այն կը պսակ ազագուն,
Խորհրդաւոր մութ ծալքերովն իր հոգին:


Ու կ'ուռնի յար թեզանիքն երեւուն
Երկայն բարակ բոյլ վերերը մեհախ,
Ինչպէս սիրս մը որ պատրաստվի իրերուն
Անհունութեան վերայ արցունք կը սրսկի:

Կ'ուսուցանեն այդ վերերը բայխփիկ՝
(Ինչ որ իրերն, խօյ գիծերով այլանդակ,
Մեզի ըսին շատ անգամներ անխօսիկ,
Շա՛տ անգամներ, օրօրներով անյատակ),

«Թե՛ ծով մըն է բացուած աշխարհն անագին,
«Ուր ճերմակներ սեւին ձուլուած ման կուգան
«Եւ խիղերու զովութեանց մէջ մեր հոգին
«Կ'անգիտանայ մահուան թրխուր պարագսն...»

«Մինչ կը յամենք, ձայնը կու գայ կոչնակին,
«Տի՛ն, տա՛ն, տա՛ն, տա՛ն, վանկերը գոռ կը պօռան.
«Անցաւո՛ր ենք, կը յուլանա՛ք տակաւին
«Թօքափելու հեռերն ու քենն առջւան...»:

ՀԱՅԿԱՆՈՅԵ ՄԱՌԻՔ



ՅՈՒՇԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԵՆ

(Յ Ա Ն Թ Է Զ Ի)

Ներկայաբերի

Աչքերնիդ լոյս, ով դո՛ւք, որ կ'անուանիք, բանաստեղծ, քէթող (?), հովուերգու, տաղաչափ, ոտանաւորութ, եւայլն : Ողջոյն և լոյս աչաց ձերոց, զի հասեալ եւկաւ . . . ՄԱՅԻՍ :

Տասն և մէկ ամիս խաղերու պէս չորս պատին մէջ անցնելէ վերջ, ահա Մայիսը որ զձեզ պիտի քաշէ տանի հոն՝ ուր սոխակը կ'երգէ, մեղուն կը լողայ, առուակը կը կարկաչէ, կովը կը բաւաչէ, օձը կը սուլէ, ձին կը խնչէ, Արմիկ տուտուն կը խնչէ, սիրահալ օրիորդը մարկոսիքի ձեռնին, ասորի մեռնիմը կը փորձէ, նորապետաբոյս միւսիւն գետնի խոտերէն ալ աւելի կը կանաչնայ, վերջապէս, հոն ուր բնութիւնը՝ իսանձարուրը նոր քակուած պէպէի մը պէս կը խայտայ, կը մպտի :

Մայիս և բանաստեղծութիւն իրարու հետ այն տեսակ սերտ յարաբերութիւն մը ունին՝ որչափ ունի քերթօրը սուրմային հետ (?) :

Ահա այս յիշանալի ամիսին է որ վաճառականի պլան պէք գրադիրները իրենց գաւառական նամակները ոտանաւոր պիտի խմբադրեն, ինչպէս՝
Թեւեւ նամակս այս ձեզ հասնի քիչ մը ուշ,
Սակայն զիսցէք թէ ձեր գործերն են կարգին,
Սոխակը հոս կերգէ ձայնովն իր անուշ,
Վաւառակներու միքէ ցա՛ չէ՛ ևն յա՛ գին :

Պաւլօ :

Թող վաճառականն ալ սպասէ ակնոցի լըթին, որ իր բանաստեղծ գրադիրը, նմանօրինակ ոտանաւոր նամակներով շարունակէ իր թղթակցութիւնը, ուրկէ կախում ունի Մայիսին Այիւ-տաղի և Օգոստոսին կղզի օթի ձ սքօմօ երթալը :

Ես իմ մասին պիտի առաջարկէի թէ, ինչպէս Յուլիսէն Սեպտեմբեր դարձողականներուն, նոյնպէս Մայիսին մեր բանաստեղծ գրադիրները վաքանս մը ունենային, որպէս զի կարենային փոխանակ վաճառականական թուղթի, տեղի քիքներէնրու և ըստօրին օրիններու վրայ երգել Մայիսը :

Իրաւունք ունի՞մ թէ չէ :

Ներկայաբերի

Հաւատացէ՛ք, բերանը լայ ձգուած մարտիկ չիլի մը պէս իր ազդեցութիւնը կորսնցուց սա Ազնուաշուք տիտղոսը :

Մերունաղարդ և ալեւոր մեծապատիւը ալ նախատինք մը դարձած է մեր մէջ, այնպէս որ մարդ երբ դոց պահարան մը ստանայ, առաջին դործն է տիտղոսը քննել, և վա՛յ անոր, որ յանդգնած է մեծապատիւ մը ճակատել, այդ ծթած տիտղոսը ընդունողը հայհոյուած անարգուած ըլլալու չափ կ'առնուի, և կրնամ ըսել թէ — եթէ չափազանցութիւն չըլլար — չի բանար խալ :

Ամէն մարդ Ազնուաշուք եղած է հիմա, չնորհիւ կարգ մը բարեսիրական մարմիններու, ինչպէս Աղքատախնամ, Կրթական մասնախումբ, Հոգաբարձութիւն, Թաղ. խորհուրդ, Զգեստաշինութեան մասնախումբ եւայլն, եւայլն :

Սյս մարմինները համոզուած ըլլալով թէ միմիայն սին շողոքորթութիւնը կրնայ ժողովուրդին քսակը խտրտացնել, աժեմին չաժեմին, վաճառականին, չըջուն փերեղակին, սեղանաւորին, ինչպէս վարժապետին սկսած են փակցնել Ազնուաշուք տիտղոսը, որպէս զի չլացնեն, փայփայեն և ստիպեն ցնծալ խնդրուած նուէրը :

Իմ մասին պիտի առաջարկէի որ այսուհետեւ ցուցակ մը պատրաստուեր այս առթիւ տիտղոսներու աստիճանը նշանակող, որպէս զի՝ իւրեք կիպի գմարիսիմ . . . պուռացող տայի Յակոբօրը՝ Ազնուաշուք Յակոբ Էֆէնտիի չափ չի վերանայ . . . :

Զորեքյաբերի

Քանի որ բարեգործական մարմիններու պողը բռնեցինք անգամ մը, յիշենք հոս նորոյթ մըն ալ որ իր տեսակին մէջ անթել հեռագիրէն ու սատիքօմէն ալ նոր է :

Նպաստի սահարկութիւնը :

Կրնամ ըսել թէ բանջարալաճառէն պագլաւ առնելուն՝ և ո՛ր և է բարեգործական մարմինի նպաստելուն մէջ երբէք տարբերութիւն չիկայ :

Տեսէ՛ք թէ ինչպէս :

Յանուն կրթական և մարդասիրական ձեռնարկի մը դիմում մը կըլլայ ձեզ,

— Զեր սրտաբախ նուէրը, . . . խօսք կառնեն,

— Շատ լաւ , 40 զրջ գրեցէք . . .
— Տէր ողորմեայ . . . կարելի՞ բան է . . .
մէկ ոսկի պիտի տաք . . .
— Բայց տուողը ես եմ , և 40 զրջ մի-
այն կուղեմ նպաստել . . .
— Ինչ և է , 80 զրջ տուէք . . .
— Զըլլար ճանրմ , ձեռնէ չ'առնենք ո՞րմէ
պիտի առնենք . . .
— Էյ լաւ 1/2 ոսկի . . .
— Բանի որ առանկ է , կէս անգլիա-
կան թող ըլլայ . . .
— Բայց վեց զրջ տարբերութեան հա-
մար . . . :

Ու վերջապէս ձեր կէս անգլիականը
տետրակը կանցնի , մինչդեռ դուք կարելի է
20 զրուշէն աւելի մտադրութիւն չունէիք
վճարելու :

Այսպէս չէ՞ ո՞ր և է գնում , ըլլայ շուկայէն
կամ փողոցէն :

Նպաստելը կը հասկնամ , բայց սակաւ-
կուծիւնը , ոչ երբեք :

Հիմնադրութի

Տարօրինակութիւններու նորոյթներ սկը-
սած են տակաւ ծայր տալ մեր գրական հը-
րապարակին վրայ :

Երեք հատը տասը փարայ չիւօգին պէս ,
երեք թուղթը 10 զրջ յօդուած . . . :

Երեք չէի խորհեր թէ՞ օր մը պոչպողա-
զութիւնն ալ իբրեւ հրապարակի անցուկ ապ-
րանք , սակազին մը պիտի ունենար :

Մեր ձեռքը գրչին հասնողը , գրագիրները
վերջնականապէս որոշելու են argent comptant
աշխատակցիլ այն լրագիրներուն՝ որոնց վը-
րայ թերեւս ուղիւստ են թէ , պարբերու-
թիւնը գլխադիրով կ'սկսի ու վերջակէտով
կը վերջանայ , թէ՞ նոյն այդ տղուած թուղ-
թերը , տեսակ մը քայլախաղ եղած են ի-
րենց խաղ գրիչը սրելու համար եւայլն :

Ու հիմա շերամներու պէս իրենց թմրու-
թիւնէն արթնցած , վզերնին վեր դրամ . . .
փարայ . . . պիտիլ . . . կը պրտան :

Այս կէտը ըստ իս շատ աշխատելի չէ ,
այդ կարգի փողաւէր գրագէտներուն պէտք
է վճարել , այս՝ վճարել , որպէս զի հաճոյ-
քով աշխատին :

Միթէ նոյն բանը չէ՞ : Պզտիկ տղու մը
բ'առկարի՛ն տուած ատեննիդ ի՞նչ կընէք :

միթէ , ճիճի մը , ժոժու մը չէ՞ք խոստանա-
նոր , որպէս զի իր միջինիկ բերանը բա-
նայ խեղճ . . . :

Վճարենք մեր ԿՍՐՈՂ գրիչներուն միայն ,
որպէս զի մեր թերթերը փրկուին քաշքշուքէ :
Իմ մասիս եթէ կուզէք հասկնալ թէ ,
քանի՞ զրուշի յօդուած մը կը գրեմ , ըսեմ :
Մէկ չիչ քայլըս պիտի , և կ'ունենաք յօդ-
ուած մը ընտիր :

Ուրբաթ

Ինձ կը թուի թէ ամէն կին , կին ծնե-
լուն դժգոհ՝ այր մարդուն մօտենալու հը-
մանելու փափաք մը , ձգտում մը ունի :

Աշխարհք ասոր ֆեմինիզմ կըսէ , ևս պի-
տի համարձակիմ մաքսիւնիզմ ըսելու :

Հաղար և մէկ օրինակներէն թուենք . . .
քանին :

Գլխարկ կը դնեն , և կ'ապսպորեն թէ
պէտք է կառսօցն ըլլայ :

Ժաքէթ մը կը հագնին , որուն կոնակը
սան քուքիւռ և օձիքը երիկ մարդու պիջիւմ
դարձած կ'ըլլայ :

Պուզներ ունին , որոնց վիզը մեր դրած
քօլէներէն կը դնեն և մեր գործածած վող-
կապները կը կապեն :

Կոշիկները միշտ մերկններուն պէս ցոծ
քալուն կ'ունենան :

Հապա գաւազանները . . . ամառը չիք
հաղուած կիները , օրիորդները անպատճառ
գեղեցիկ բարակ գաւազան մը բռնած կըլ-
լան ձեռքերնին :

Հոս չեմ ուզեր թուել այն փարք մը կի-
ները , որոնք Երիկմարդէն քար կը հանեն ,
այսինքն մէկ նստելնուն երկու երեք չիչ օղի
կը խմեն , այր մարդէն աւելի աղջկցիկ
խօսքերով կը կռուին , և որ աւելին է , փա-
խանակ ձեռ ուտելու , իրենց Երիկը փառա-
ւոր կը տփեն ալ . . . :

Ահա կը տեսնէք որ մեր փախկասեւ ու-
հինըր ո՞րչափ կը մօտենան մեզի :

Արդեօք չի մեռած պիտի կրնամ տեսնալ
օրիորդ մը որ սրիւր բանթալօն հագնէր , և
կին մը որ պ'ըծ առ կրեր . . . :

Շաբաթ

Փափաքներս :

Միակ և միմիակ փափաքս է տեսնել ո-
րիորդ մը որ զինքը դիտած ատենդ ձեռը չի

փոխէ ու աղո որ երեւնայու համար կտայիկի
ծամածու թիւններու չի մասնէ ինքզինքը :

Տիկին մը որ ամուսնոյն քսակին համե-
մատ ծախսէ :

Վարժապետ մը՝ որուն դասվածը օձիքէն
վ՛ր թիւած չըլլայ :

Վարժուհի մը որ բուսուա չի քսուի :
Նշանած մը՝ որ կիրակի մը իրենին բե-
լընին թիւը առած պոռոյտի չըլլայ :

Դրադիր մը՝ որ ինքզինքը չի գովէ :
Բանաստեղծ միւսիւ մը՝ որ իր կարճա-
տես նայած ժամանակը՝ աչքերը չը պղտիկ-
ցնէ :

Կրագրապետ մը որ չի զանգատի իր ծան-
րանուն բաժանորդներին : (Ես . . . քանի
որ վարժուեցայ ալ Մ. Վ. Փ. ի) :

Իերձակ մը՝ որ նետք խօսած ժամանակ
հաղուստիդ չի նայի, չի դնէ :

Վաճառականի դրագիր մը՝ որ կիրակի
օրերը իր բախուծնէն աւելի լիւքս չընէ :

Կիրակի

ՄԱՅԻՍ ՄԷԿ :

Կարդացէք ԼԻԼԱՍ

ՄԱՌԿՈՒԹ

Պ Ս Ա Ն

Երկուշաբթի Սկիւտար, Սէլամիէ, Շահ-
պազեանց բնակարանին մէջ կատարուեցաւ
պատկազրութեան հանդէսը՝

ԱՐՇԱԿ ԻԾ. ՏԱՂԼԵԱՆԻ

ԸՆԴ

ՕՐ. ԵՐԱՆՈՒՂԻ ՇԱՀՊԱԶԵԱՆԻ

Պատկի խորհուրդը կատարեց Վեր. Շահ-
անեան, ի ներկայութեան ազգականներու
և բարեկամներու հաղորդութեան մը :

Արշակ էֆ. Տաղլեան իր առած ուսմուն-
քին միացուած է գեղարուեստի նուրբ ճա-
շակը և երաժշտութիւնը, ու կը դասախօսէ
Մարդուանի Դօլէճին մէջ :

Իսկ Ազն. Օր. Երանուհի Շահպազեան իր
սեռին պատուաբեր, նկարագրի տէր օրիորդ
մ'է որ իր ուսումը առած է Եւրոպա :
Հմուտ Անգղիերէն և Դադիերէն լեզուներուն
և վարժ դաշնակահարութեան մէջ :

Խմբագրութիւնս իր խնդակցութիւնը կը
յայտնէ ջերմապէս, Տէր և Տիկին Դրիդոր
էֆ. Շահպազեանի, և երջանկութիւն կը
մաշիթէ նորապսակ ամուսին :

Ք Ե Ա Ղ Ը Տ Ե Ա Ն Է

Քեաղըսխանէ՛ գայլալիւ՝

Օձի նրման գալարուն ,

Կը սողոսկի բերկրալիւ՝

Մեզ լպրծուս սեղերուն :

Մեզ լպրծուս սեղերուն ,

Բացուած՝ ջուրին մեզ պղտու ,

Աչուկներու պէս սիրուն

Ինչ ծաղիկներ կան աղուու :

Ինչ ծաղիկներ կան աղուու ,

Մարգին վրայ ցիւր ու ցան ,

Հազարաւոր , բիւրաւոր ,

Դոյն ու փայլով զանազան :

Դոյն ու վնայով զանազան

Թիթեռք բերել , թափառուն ,

Թուփե ի թուփ կը փութան

Մօս դալարուս ափերուն :

Մօս դալարուս ափերուն

Կալամախին ու սօսին ,

Ուռենիներ սարսրուն

Իրարու հետ կը խօսին :

Իրարու հետ կը խօսին

Շաղկապ գործերն օրն ի բուն ,

Օրհնենք կ'երգեն Մայիսին

Մեզ լպրծուս սեղերուն :

Մեզ լպրծուս սեղերուն

Կը սողոսկի բերկրալիւ ,

Օձի նրման գալարուն

Քեաղըսխանէ՛ գայլալիւ :

HIRONDELLA

Ձ Ե Կ Ո Յ Ց

Էվլէրէկ-Նէնէսէի համար թերթիս գործա-
կալութիւնը յանձնուած է ՄՆԾ. ԳԱՐԻԻԷԼ
Էֆ. ԹԱԴԻՈՐԵԱՆԻ, որուն պէտք է դիմել
բաժանորդագրութեան համար :

ՄԱՅԻՍ ՄԷԿ

(ՔՐՈՆԻԿԻ ՊԷՍ ԲԱՆ ՄԸ)

Արտիան սեռին մէջ հարուստ երիտասարդները, իգականներուն մէջ լեզուանի օրիորդները և ամուսններուն մէջ Մայիսը կը փնտռուի միշտ:

Մայիսը բնութեան հարսնուկն է, իր կանանց չըջազգեստով, որուն վրայ նորաբողբոջ և զունագեղ ծաղիկները եկած դարդարած են հիանալի ըսուելու չափ ներդաշնակ և աղուոր:

Եթէ կեանքի և հաճոյքի միօրինակութենէն ձանձրանալու վտիւր չունենայի, պիտի ուզէի որ տարին տասերկու ամիս Մայիսը շարունակուէր իր հալոյն գեղեցկութիւններովը: Ոչ ձմեռուան թափոնները, ոչ սուառեւ տը կալաները, և ոչ ալ աշնան համեղ պտուղները, պտոյտները պիտի ուզէի վայելել, այլ միայն Մայիսը, դաշտերու կանանցը, ջուրերու կարկաչը, կարմիր կակաչը:

Հազար գեղեցիկ սեռին առաւելութիւնները:

Այս չքնաղ ամիսին մէջ է որ կիները իրենց աղուոր զիմակը կանցնեն երեսին, ժպտուն կըլլան անոնք՝ միշտ ուրախ, միշտ զուարթ: Օրիորդներուն այտորը հայելիներ կը դառնան, ուր վարդը իր գոյնը կը ցուայնէ անոր մէջ, և սոխակը կարծես անոնց բերնին մէջ կը գեղգեղէ, Ֆոֆոկաճի գլան լեցնելու պէս: Այլ հաստ սաքէրը չեն կրնար ալուրի պարկ դարձնել զանոնք, այլ բարակ մաշկին չըջազգեստներ թեթեւ մը կը ծածկեն զիրենք, այնպէս որ իրր վարդի կոկոն լրջնելէ կուզայ զիրենք, երբ հանդիպիս փողոցին մէջ կամ այլ եւ:

Մայիս, մայիս, նորէն մայիս:

Նախախնամութիւնը ուղեւոր սխռբոյի մը ընել մարդկութեան, այս ստորի, այս անմահական ամիսը կիրակիէն սկսած, որպէս զի ամէն ոք առիթ ունենայ ողջունելու զայն իր կարեւոր պարտականութիւն:

Մայիս մէկը ինքնին եթէ ոչ տաղաւար մը զէթ նշանակելի և ուրախառիթ օր մըն է, բերկէ կ'օգտուի մարդկութիւնը (V S):

Էն նշանակելի վայրերը ուր կերթան ողջունել այս կանաչադարձ և ծաղկալուսակ հարսնուկ-ամիսը հետեւեալներն են:

Խաղիւղի Պատեմիկը, Սամաթիոյ պօտտանքները, Մադրի-գիւղի Չըրիքճըն, Քեհաուհանքն, Դատը-գիւղի Հայտար-փաշան և Սկիւտարի Չամլըճան:

Ճեղի դաղափար մը տալու համար թէ՛ Մայիս մէկը ինչպէս կ'ըմբռնեն մերինները, և ինչպէս կ'անցնեն այդ օրը, պիտի ջանամ քրտնաթոր ճիղերով պիտի աշխատիմ նկարագրել հոս վարը: Բայց որովհետեւ մէկ օրուան մէջ կարելի չէ Պոլսոյ չորս հովերը այցելել ընդարձակ քաղաք մը ընելու համար, պատիւ ունիմ նիւթ առնել միմիայն Սկիւտարը, քանի որ հոն բնակելու առաւելութիւնը ունիմ, վկայ հաղուստներու վրայի անողակաս փոշին և նապաստակի պէս զառիւղները մաղցելու յատկութիւնն:

×

Կիրակի առաւօտ էր: Բնութիւնէն երկու ժամ վերջը արթնցայ երբ արդէն արեւը աւելի մաքեցի գերը կը կատարէր, աչքերս խախտացնելով իր սուր և փալփուռ ծառադայթներովը:

Թէեւ զրուած է թէ՛ Մայիս մէկին Ան-ՊԱՏՃԱՌ գաւաթ մը կաթ պէտք է խմել, սակայն բացառութիւն ըլլալով ես այդ բանը չըրի. . . որովհետեւ կաթը կտրած էր:

Բայց ճեղի ինչ փոյթ, իմ արթննալս, կաթ խմել կամ չխմելս, նիստ ու կայս. կարգ մը յօդուածադիրներու պէս զճեղ ինձմով զբաղեցնել չէ միտքս, ուրեմն բուն նիւթին կանցնիմ:

Հաւատացէք Մայիս մէկը ջինջ ու կաղ-դուրիչ միջոցորտը ալ աւելի աղուոր և լիտ-

թոք պիտի չնշխար, եթէ սա նահապետական տաղանդն և միակերպ պէս չոր չիւղղին հոտը տարածուած չըլլար ամբողջ Սկիւտարի վրայ :

Աւանդութիւնը կը պահանջէ որ այդ օրին, տօլմա ուտուի, և ան ալ գետինը, կանանչի վրայ, իբր թէ ուրիշ անգամ կամ ուրիշ տեղ չէր պատշաճեր այդ ողորտներու արքային (տես ժողովրդական բառարան Թէոքիկի) : Եւ կը մտածեմ թէ արդեօք ինչ թօնադուրիկ կանացի թաթիկներ մուրվախիմ ս'ընի մօտ կայնած վաթթած են զանոնք, ամէն մէկ հատիկին մէկ մէկ նշանաւոր քերականութիւն իրենց աղջկանը համար :

X

Չամբաճայի երկոյնեան խրախճանութիւնը նկարագրելէ առաջ, առնենք ընտանիք մը իբր օրինակ, զիսցընելու համար թէ, Մայիս մէկի տօլմայի տօնը ինչպէս կը կազմակերպուի մեր հայ տուններու մէջ :

— Ինծի նայէ Յուլիկ, չելլաւ ճերմակ փէշդ հագնիս, եանի կապ կանաչ կըլլայ գետինները . . . :

— Աման տուտու՛ւ, աս օր չի հագնիմ տէ ո՞ր օրիս պահեմ, կը խաշիմ կոր բուրդերուն մէջը, հէ՛մ ալ կարերը չաթըն չուծուը կը նետէ կոր . . . :

— Չիտեմ ալթըն, չէնէ տիւաթ ըրէ տէ նստած վախիթդ փէշերդ վեր առ միտոյդ վրայ նստէ . . . :

— Հայտեցէք արեւը թէփէս ելաւ, կը ձայնէ Քէորդ աղան սիկառ ի բերան, և մէկ կողմէն օղին չիչը փաթթելով . . .

— Էյ կըլլանք կոր իշտէ, տահա տօլման ճուրը չի քաշեց, Յուլիկն ալ մաղերը չակէ տէ . . .

— Քա ձեզի ո՞վ ըսաւ քի սուվառէ կերթանք կոր տէյի, լեռանը չիմէններո՞ւն համար է աս թուալէթը . . .

— Տէր ողորմեայ, զահէր պարակ բուտա մը օլսուն չի քսուինք . . . հիմաճուկ հոն երթանք նէ կը տեսնաս խալաղալըսը . . . թող երթայ չիչէկներու պէս պտուտի . . .

— Պտուտի ամա՞ . . .

— Կլնէ մի պաշայէր Մայիս առտուով, ձմեռը խող խաղաղին խոթեցիր, ամառն ալ ձգէ քի սէրիկիմի ըլլայ . . .

— Սէրիկիմի ըլլայ ամա՞ . . . Կաթն զապտը չիս կրնար ընել տէ, քէօտեկիմի ընել պէտքը կըլլայ . . .

— Աման . . . ապուխ սուպուխ, անոր մարը ճէլանի պէս զրած է, մարդու աչկ պանալ չեմ ի տար . . . դուն ինծի կը նայիս կոր . . .

— Հիմաճուկուանները անանկ բէշի մար, քայտի մար դալուն մօիկ ընող պոյերէն չեն . . . նէ խէ հայտէ ըրէք տէ ճամբայ ելլանք :

Այս և այս տեսակ խօսակցութիւններով է որ Մայիսի առտուն դուրս կիյնան տունէն օրուան տօնը վայելելու : Հիմա մենք պիտի նկարագրենք բուն նիւթին միջուկը, այսինքն, ժամը տասնէն վերջը :

X

Հաւատացէք, եթէ երկուսսարդ մը ամուսնանալու միտք ունի, և կ'ուզէ ալ ալ երեսով, քարիտէզ սուռաթլը օրորդ մը առնել իրեն կին, հոն՝ զառիվերին գլուխը գտնուելու էր կիրակի երեկոյին :

Բոլոր վերելակները — անշուշտ գեղեցիկ սեւին համար խօսելով — կարմիր կարմիր երեսներով, որոց վրայէն քրտինքի խոշոր կաշակներ սնդիկի պէս վար կը դալարէին : Փէշերին սոթթած, սկառքիներին ճակ ճերմակ փոշի, հովանոցներն գլուխին, ինչ ապրանքներ . . . Աստուած մի արագացէ beauté, vèpus ուրիշ բան չէ : Կարծես նախախնամութիւնը աղուորութիւն ըսուած բանը Սկիւտարցոց տուած էր այդ օրը, այնքան շնորհայի հով մը ունէին վրանին, բայց . . . եօխուչին վրայ միայն :

Վերը սեքերուն վրայ, փունջ փունջ ընտանիքներ, խսիր աթոռներու վրայ տոտուռողուած նստած էին, այն տեսակ լրջութեամբ մը, որ կարծես թէ դպրոցական հանգէսի մը ներկայ գտնուէին :

Կիրակիի բազմութիւնը երեք մասի կըրնանք բաժնել :

Նախ Մայիսճիները, որոնք արեւին հետ մեկտեղ գլուխներն բարձէն վեր առած և առջի իրիկուրէն պատրաստ սեյիներն չալկած հոտ եկած էին, նախաճաշը, ճաշը և ընթերցող հոտ ընկու համար :

Երկրորդ, երեկոյեան ուխտաւորները, ու

րոնք թաղէ թուալէթով, քոռաէլի և ձեռնոցաւոր, կապարի պէս ծանր ու յամրաքայլ եկած էին ողջունել մայիսը:

Երբորդ, միւսիւններու երամակը, ասոնք ալ Մայիսէն աւելի բազմութեան, գեղեցիկ դասակարգը գոնէ աչքով վայելելու մարմաջով՝ հե ի հե եկած էին աւելցնել բազմութեան թիւը: Բոլորն ալ blanc-bec, որոնց մէջ, ի մէջ այլոց կը նշմարուէին, զպրոցահոտ, զբառնողանալոր, աղւաւաւաղեան, և շուկայիկ անհատիկներ, որոնց ներկայութիւնը քօլէճի մը դաշտահանդէսը կը պատկերացնէր զիտողին աչքին:

Երսթոա դասակարգ մ'ալ կար, դանձանկճիւնները, որոնք սուրճին օգտուելով չըռախ, չըռուխ դէմք կեկլային ամէն մէկ քայլափոխիդ:

Հիմա հոս պատիւ պիտի ունենամ ներկայացնել վերոյիշեալ դասակարգերէն մէկ մէկ օրինակ և անոնց խօսակցութենէն նմանոյններ, դադարաւոր մը տալու համար այդ օրուան կեանքին վրայօք:

×

Մայիսճիւնները:

— Ինձի նայէ խնուրկտուր աղա, հէրիք է ալթըր, չափը անցուցիր, չիշէն ալ տիպ եղաւ, հիմա էլիզայիտ ակուային ցաւը պըռնէ նէ ինչ պիտի պըռնէ վրան . . .

— Է . . . անխտայ խօրաթեցիք քա՛ . . . կը խըմեմ կո՛ր տէ՛ ֆ պլոց մը բրած չունիմ ես . . . չօք չէյ, աս ալ ասանկ օր մընէ . . .

— Փա ճանըմ քէօֆտին ևս տառցեր . . . սա սուռաթիդ ըռէնկը նայէ . . .

— Խաս է քա՛ . . . անանկ ծերիկին պէս ետընդլաւա չէ, մանտիդ թուք ըրէ տէ պեր քսէ՛ նայինք, պուտ մը պան կեկլայ վրան . . .

— Բ՛ն . . . եանչախ . . . պիտպիւթիւն ծարերը թող տուիր ալթըր, չորս դիտ նայէ մէյ մը . . . բիթիւն քեզի տիխաթ կընեն կոր . . .

— Խըսիսանմիջ չըլլաս քա՛ . . . էրիկդ փառախ է կընային կոր տէրի . . . կիւզէէ քիմ պագմաղ . . .

— Ետմուռճախ տանի սուռաթիդ, թոս պաղի ևս տառցեր . . . վայնի վրադ, ևս քովդ չըլլամ նէ չուները պիլէ քովէդ չեն անցնիր . . .

— Մայրիկ, ևս սանկ մէյ մը թէփէն ելլամ պիտի, հայտէ հետ եկուր . . .

— Նստէ՛ . . . հոս եկողը հէլպէթ ուստերիք մէզէն հետը պերած է, քեզի պէս քոթին չունին . . . կըսէ հայրը:

— Ու՛ֆ . . . ամէն մայր թէփէն կեկլայ կոր . . .

— Նստէ տեղդ կըսեմ կոր, հիմա թէփէլէմիջ կընեմ հա՛ . . .

— Էյ ինչո՛ւ սանքի, Խնուրկտուր աղա, միտըմը ձգէ քի սէրբիլմիջ ըլլայ բորճիկ մը . . .

— Խուզիներուն համար խոտ չիգայ հոս, բիթիւն չորս դին ըսըռլան օթիէ չէս տեսնար կոր . . . կեկլայ իլիշմիջ կըլլայ . . .

— Տէր ողորմեայ . . .

— Սանկ մէյ մը ելիր կաճնէ տէ չորս դիտ նայէ, ինչտար Զատիկէն մնացած պօյալը հաւկիթ կայ նէ հոս են թափեր . . .

— Աղջիկս անտեղուանքը չէ . . .

— Մերինը անտեղուանքը չէ ամա, չըրեն իշի անտեղուանքը կը տանին . . . դուն սա չըռօղին թաղախը ասդին հրէ . . .

— Բաթլամիջ ըլլաս, ճաթելու խոար խմէ . . . մօրդ կաթն էր սանքի . . .

— Նա քա՛, սէնտէ տթըլէր պիր թանէ . . . նա՛ . . .

— Պէտքը լին չունի, ինձի հետ աղէկ մարդ մըլլտր, ձգէ քի էլիզս սանկ մէյ մը տառցունեմ, կիւզէլիմ ֆիստանը չինեցինք քի տամա թաթիլ պէս կեցած տեղը մնայ տէրի . . .

— Պէ պաղամ ֆիստանին համար չէ, մէջինին համար կըսեմ կոր . . .

— Սե ոահաթ է եղեր քի խեղքիդ ույմիջ եղայ տէ ելայ եկայ, տունիս քէօչէ փէնճիլէսին ինչ ուներ սանքի . . .

— Տա ետուռտին չանախը աս թառաֆ քըչէ, սիրտս կերի կոր . . .

— Շան սատակ ելլաս հէմէն, աս իրինկուն կէնէ դործ ունինք, պարէ ետթաթիդ թաթըմը թէմիդ թէմիդ նոր փոխած չըլլամ նէ . . .

— Սապօնին փառան դուն չես իտար կո՛ր եա . . .

— Է՛ֆ . . . վրաս մարելիք եկաւ, ելլամ մէյ մը դառնամ, չը համէի տօլման զնեկու տէ թախ հոս կալու, քալէ քա էլիդ,

ըսելով կը մեկնի մազերը աղանջին քովէն թուրթամ թուրթամ վար կախուած, մինչ յոռնուրկութեամբ աղա առիթէն օգտուելով չիշը բերնին կը փռուի խրտիւրին վրայ, ընդհանուրին առջև:

Երկրորդ դասակարգէն պատկեր մը:

— Աս որչափ բազմութիւն . . . գիտնայի նէ չէի իզար, պիւթին աչք աչքի մէջ կը նային կոր գիտես քի . . .

Այս խօսքը ընողը տիկին մընէ, վէլոն երեսին գլխարկը գլուխը, կանքի, պոթէ, բայց ինք ոչ *beauté* . . . հետը ամուսինը կայ *endrimanché* աղա մը խալիպի գդակով, և պոստուով, որ նստած՝ գրպանի ճերմակ իւթիւն վրան թաշկինակովը կօշիկին փոշիները վար կուտայ բոպէն անգամ մը:

Մէկ երկու քօլալը քօսէլի կին աղջիկ չեմ գիտեր նստած են միասին, որոնք վէլօններուն տակէն քրտինք կը թափեն չըփռո չըփռո, ամէն մեղքիս վրայ չուշուռտան միւսիւ մըն ալ կայ քովերնին, ինչպէս նաեւ ձեռքի ջանքա մը փաթթած չիշ մը, և ինչ:

— Հապա, այսօր մայիս է տէյի ամէն մարդ եկեր է իշտէ, կը պատասխանէ աղան, ձեռքի թաշկինակը հարկւր չորրորդ անգամ ըլլալով կօշիկներուն զարնելով:

— Տեսար քեզի չըսի՞ քի նոր ֆիտտանդ հագնիս տէյի մայրիկ, կը տեսնաս կոր լիւթիւն հագուած շաքսաներով եկիւր են . . .

— Ինծի նայէ Սուրբուհիցայ, սա անկաճիկ վրայի բոլորտան ուսուցիչ մը սրբէ, ամա պէլլի մընէր . . .

— Քա նա՛ նա՛ Հոռոքիկին նշանածը, մայիս է տէյի խօլթուխը առեր եկիւր է, ինտոր ալ կընեն մարիկ . . . մերկները ըլլայ նէ տինկեանը կը հանէն քի միւսուորիկ ձեգեր են քի գայ տէյի . . .

— Ձեզի բան մը ըսեմ, ես սէթիս պիտի հանեմ, կըսէ աղան ոտքի ելլելով . . .

— Քա ճանրմ մենք վէլօնիս պիւլէ վեր չենք առներ կոր, նասը կը հանես . . .

— Էյ ինծի՛ ինչ ձեր նեղուիլը . . . չօք չէ՛յ . . . փաթլամիլ կըլլամ կոր . . .

— Քա ճանրմ չի՛ վայեր . . .

— Առջն մը հեռուն նստեցէք կը վայլէ, խըստուելու չեմ ես . . .

— Քա մայրիկ, մի ձգեր, ամօթ է . . .

— Մտիկ կընէ՞ քի . . . քառասուն չիֆթ

մանտա ըլլայ նէ կլոխը ասդին չեն կրնար տառցւեներ . . .

— Վա՛յ մատամ . . . ասանկ եղանք . . .

— Հապա ի՞նչ է, սո՛ւտ կը զրուցեմ կոր . . .

— Անանկ էնէ ի՞նչ տէյի չի ձգեցիք քի սիւլիւկներս փակցունէի տէ տունը նստէի . . . հէմ առիք եկաք, հէմ ալ վարպետ տուտու էք կտրեր կըլոխ . . .

— Քա սուս ճանրմ, կասնին կը դառնան կոր . . . քրտինք կը կոխէ կոր վրաս . . .

— Պաղերդ կիւլայ աղէկ է . . . կընիկ չէք մի, բիւթիւն գործերնիդ հալիուեն համար է, հիշ ինքզինքնուդ, վուճուանուդ ըսահաթը չէք մտտար . . . սուռաթնիդ նայէ առաճիկ խալպուր էք անցուցեր գիտես քի . . .

— Քա սուս ճանրմ քովինները հայ են . . .

— Ինչ կուզեննէ ան ըլլան, վաղիֆէս էր . . . ձերը պտտիլ հալա առնել չէ քի . . . ֆիտտան շաքսա ցուցնել . . .

— Քեզի բան մը ըսեմ, քուկին խեղքիդ է եկիւր աս օր, արունդ տուցիւր է . . .

— Իշտէ կիսլիք կոր նէ, թող ձգէիք քի սիւլիւկներս փակցունէի տէ արունս տուսուլիլ ըլլար . . . սա սէլէն աս թառափ տուր նայեմ, քիշ մը պէյնա թիւթսիւլէմիշ ընեմ, ըսելով պայուսակը կը բանան ու ըստ սովորականին օղին հանդերձ մէլէյի քի շանդէս կուգայ:

Փամ մը վերջ երբ մօտերնէն կ'անցնէի, կնիկներուն վէլոն զլխարկով մէկտեղ ծառէն կախուած, քօսէլները քակուած, փէշերը սոթթած, դեմքերը կաս կապուտ զանգաններ թող կուտային: Եւ այն տանտիկինը որ իր ամուսնոյն ծաքէթը հանելուն համար զխտողութիւն կընէր, աչքովս տեսայ որ ծառին ետին բիրէ կը փնտռէր . . . անշուշտ չորրորդ գաւաթէն վերջը:

Երրորդ դասակարգը:

Չուշու միւսիւներու և *blanc-bec* երիտասարդներու դասակարգն է այս, որոնք ամէն նմանօրինակ առիթներ չեն փախցներ, ուր որ երկու կանացի փէշ կը տատանի, և հոն ուր չորս օրիորդներու զլխարկները կը ճօճին, այս միւսիւները ներկայ կըլլան անպառճառ, մի հարցնէք ինձ . . . պատճառ:

— Նա՛ ծօ՛ աս թառաֆէն կու գան կոր . . . մալիկին ալ մէջերնին է . . .

— Է՛յ ծօ՛ . . . ով կը խափես կոր , ա-
նոնք թէփեն ելան . . .

— Նա՛ , քէօռ ըլլամ , հէ՛մ ալ մարերնին
հետերնին չէ . . .

— Անանկ է նէ կեցէք ինկիլիզճէ լա-
խըսառ մը նետում , ճերմակըն կը հասկնայ . . .

— Ծօ՛ չկլլայ հայրիկին ըսէ . . .

— Անմատա վախկոտ ես եղեր , հէլէ
դուք ետեւես եկէք , ըսելով դէպի լեռանը
կողմը կերկնան , ուրկէ երեք օրիորդներ
յամբաքայլ վեր կեկային :

— Կօտ ալեկինկ մատմազէլ . . .

Օրիորդները սանկ քովընտի ակնարկ մը
ձգելով վրանին , կակտին քթերնուն տակէն
խնդալով շարունակել իրենց ճամբան :

— Հոս եկուր ծօ՛ Դէորդ , աղուորին ին-
տոր կըսէին . . .

— Պօթըֆըլ , ծօ՛ չիտես նէ ինչ մէջ ես
ինկեր . . .

— Ես առ շատ պօթըֆըլ օրիորդ . . .

Օրիորդներէն մին որ քիչ մը տարեց կե-
րեւէր , խօսք անսկում . . .

— Ի՞նչք ո՛ր դպրոցէն էք պարոն . . .

Տէ՛սկուտ էր մեր հարֆէնտաղ քէլոյ լիա-
յին դէմքի կարմիրը , որ Զատիկ հաւկիթին
քար կը հանէր . . .

— Իսրոցէն ելած եմ . . . չարէին սա-
տէքնարի քով աշկերտ եմ . . .

— Ուրեմն չը գիտցած մէկ լեզուդ ինչ-
պէս կը հաճարձակիս խօսելու , աւելի բա-
ւէ որ արհեստիդ մէջ յառաջդիմութեան փոր-
ձեր ընես , փոխանակ արիկայարար խօսք նե-
տելու . . . մայրիկիդ խապար ամա՛մ . . .

— Մարդ կը ճանչնայ կոր եղեր ծօ՛ Լե-
ւոն . . . հայտէ կրծիկը գնենք . . .

— Աս է ծօ , ինկիլիզճէ կիտեմ տէյի ճա-
խա կընես կոր , նայէ աղջիկը մօթուստ
տարեց . . .

— Է՛յ ծօ՛ . . . քեզի տառը տարի դաս
կուտամ . . .

— Կիտեմ , դուն դասը կուտաս ամա
պաղնիքին թասը :

Գանձանակիները :

Վզերնին մէկ մէկ ծալքը վրան ճերմակ
թաշկինակներով , արլան քրտինքը մտած
երիտասարդներ , միզուներու պէս հոս հոն
կը թռչաին :

×

Երեկոյին երբ արեւը կը խոնարհէր մեզմ
զովութիւն մը ձգելով ընտրեան վրայ ,
դեռ լեռներուն վրայ վարպետորդի տի-
կիններ առիթէն օգտուելով իրենց կէս գի-
նով ամուսիննի ուն Մայիսի տօյմա կըլլեցնե-
լով կղբաղէին :

ԼԻԼԱ

ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ , շուիլ եւ աղամանդներով
զարդարուիլ , ինչպէս նաեւ քան կա-
րասիներ կոկել ամէն կերպով , առանց
բազմիդ պարպելու

Ա Յ Լ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես , աղջկանդ օծիտը կը մտածես՝ դիմէ՛ .
Օրիորդ ես , շիրք եւ աման հագուիլ կուզես՝ դիմէ՛ .
Երկրասարդ ես եւ շիրք կը սիրես՝ դիմէ՛ .
Տարեց ես եւ ցուրտէն պատասխարուիլ կուզես՝ դիմէ՛ .
Տղաքներ ունիս որոնց պիտոյքը զանկը կը ճամբեցնեն՝ դիմէ՛
Անուանացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ՛
Եկածը կաղանդ , է նուէրներ գնել կը փափարիս՝ դիմէ՛ . . .
Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած էս՝ դիմէ՛
Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ՛
Կուզե՛ս տունդ կոկել ճաշակուոր կարասիներով՝ դիմէ՛
Առանցսկարգ եւ տոկուն զուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛
Կուզես շիրք . ճաշակուոր եւ լաւ տեսակ փողկապներ ու-
նենալ՝ վերջապէս կուզես՝ ոտից ցլուխ հագուիլ , շքուիլ ,
պճտիլ :

դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, Գուլու մճըլար փողոց թիւ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուածի ,
ճերմակեղէնի , ֆանիկի , աղամանդի ,
ժամացոյցներու , չղթաներու եւ ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ զնոգներու համար հարկե-
րին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը չարաթական վճարմամբ .

2. Կանխիկ զնոգներու համար հարիւրին
5 դեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն աղամանդեայ գոհարեղէնները երբ
զործածուած բայց անվնաս մնացած ըլլան ,
հարիւրին 10 դեղչով , իսկ ապառիկ ծախ-
ուած եւ անվնաս մնացած միմիայն աղաման-
դեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15
դեղչով ես կ'աւանդին :

ՍՍ.ԿԱՐԱՌԹԻՒՆ ԶԿՍԵ

25-30

ՔԱՇՔՇՈՒՔ

ՅՕԴՈՒԱԾ — ԿՕՇԻԿ

Հանրակառքին մէջ ենք, երկու ակնուցաւորներ (որոնց վրայէն գրագէտի հոտ մը կուգար) կը խօսակցին քովս, մին խիստ վայելուչ ձեւեր ունի, և կերհւայ թէ զարգացում տեսած է, իսկ միւսը քթին մէջէն կը խօսի, կարծես Սամաթիաէն անդին չէ գացած, որչափ որ կը յիշեմ սապէս բաներ մը կըսէին իրարու:

— Վերջապէս մեծահոգակ Պարսամեան քերթողն ալ գրական Սինտիքային միացաւ:

— Եղբայր, յօդուածներնու առեւտուրը լաւ ճամբու մէջ է և եթէ ասանկ երթայ պիտի կրնանք յօդուած—խանին դետինը ծախու առնել . . . :

— Կեցիր եղբայր անկից առաջ սա կօչիկս ինտո՞ր է. նոր առի, երկու յօդուածի փոխարժէքն է, տեսա՞ր դրամով յօդուած գրելուն աղէկութիւնը:

— Շիք է, այո, ևս քու տեղդ ըլլում անունը կը դնեմ . . .

— Յօդուած-կօչիկ . . . այնպէս չէ, իրաւունք ունիս . . . եթէ բոլոր գրողները քաշուին և սա խմբադրասպետները վճարել ստիպուեցն . . .

— Շատ լաւ կըլլար, բայց նաև աղօթենք որ ճարտնական պատերազմը վերջա՞յ: Եթէ նիւթ մը չը գտնան անկուտի գրողներէ, չուտ մը պատերազմի տեսութեանց կը դիմեն:

— Եղբայր փոխանակ յօդուած-կօչիկ բառը ղենուդ, աւելի լաւ: չէ որ նոք բառ մը չինենք, յօդածակօչիկ, կամ կօչկայօդած ըսենք:

— Այո, ևս միտքս դրի քանի նոր բան գնեմ յօդուածներու փոխարժէքով, անունը յօդուածով կը մկրտեմ:

— Ախ, շատ խըյախ կըլլայ եթէ անգամ մը սա բոլոր գրողները քաշուէին, բայց անկուտի մնալու են որ ստիպուին դրամով գրելու . . .

— Մենք անկուտի՞ մնացեր ենք, փառք Աստուծոյ, ո՛չ, այլ նկարագրի տէր ենք,

գաղափար ունինք, մեծ անուն ունինք և կը յաջողինք, վկայ յօդուած-կօչիկս . . . :

— Սխալ ըսիր, կօչկայօդածդ, բայց Տօմինօն դէմ է եղեր, ապերախոր, մենք ալ յօդուած-խանին մատակարարապետ պիտի ընէինք:

— Հոգդ, վանցի գրող մը կը գտնանք ու օտա-պաչի կընենք . . .

Հանրակառքը կեցաւ Թագսիմ, մեր երկու գրողները վար իջան, քովս նստող ծերուկ կին մը ինձ դառնալով ըսաւ.

— Աֆ կընէք, սըլոնց խելքի՞ն դպած էր կտոր մը . . .

— Ասոնք մեծ մարդեր են, ըսի, օր մը միլիոնատէր պիտի ըլլան և հիմակ արթուն կերաղեն:

ԵՐԱՆՈՍ

ԵՐԱՁ

Իսեպս եր վայել սե՛ր հոգի՛րով,
Կոյս սրբի մը՝ պիղծ յոյզերու անձ սօր:
Համակ սնչուս, նուրբ շարժի քիւրով.
Հիւսուած ըլլա՛ւ անոր հոյի՛ն՝ վեհերո՛:

Ծովուն՝ խոխոս արիւններուն ամուհի,
Մասնովն ըլլար իւր աչքեր վես աղու,
Ու մօտավառ մեծ ջահէն ալ լուրք երկնի,
Թող շիկնէ՛ն այդ նայուածքն սահալու:

Անցառին խիս պուրա՛յներուն մէջ՝ յոյն,
Առուա՛լի մը բող մմանե՛ր ս՛րան անուր.
Ու Սիւհերը՝ սիրամարաց մմունջին,
Միւս յուզէին իւր ծալերը՝ ամեն օր:

Բայց բոլորն ալ այս իլծերուն սուրբ անձեջ,
Յաւես երազ պիսի մման՝ մսփս մէջ: —

Ս. ԽԱՉԱՆԻ

Ե Ր Գ Դ

ԱՐՁԱԿ ՔԵՐԹՈՒԱԾ

Հանդարտ գիշեր մը, պատահաբար առջեւ նստած տնայնակ, կը դիտէի աղուոր լուսնկան, որուն վնիս ցոլերը կը բաժանուէր հրդեհուած սրտիս խորը, եւ կարծես քէ կը զովացներ ան իմ բոցավառող սիրտս, երբ քանի՜ վրադ կը խորհէի :

Տանգաճմանը մէջ երբ կը գալարուէի, յանկարծ լսեցի ձայնդ աղուոր, որ սիրոյ երգ մը կ'երգէիր եւ դուրս կուսայիր կարմիր շուրթներէդ զիս զգլխելու աստիճան. չես գիտեր որչափ բզեցեցաւ սիրտս երգդ մտիկ քրած ասեմս : Ո՛հ, մելանուծ ձայնիդ քրքրուումները, եկան բառեցան սրտիս նուրբ քելերուն վրայ, եւ անոր յետին արձագանգը՝ գամուկեցաւ բաղձոտ սրտիս խորը, որ հիմակ միշտ կ'երգէ քեզ . . . :

Ձայնիդ տղանցիկ ելեւեջները միշտ կը հնչեն ակամօքս, ու կը վառեն սիրտս, ո՛հ, այդ վայրկեանին երգիդ դիւքսնէն գինով-ցայ ու կուգէի քովդ գալ եւ առջիկ ծնրադ-րել քեզ մտիկ ընելու համար, նաեւ խառնէի իմ արցունքներս դալկոտ այտերէդ վար վազող սիրոյ արցունքներուդ հետ : Ի՞նչու նստած մինչ կ'երգէիր, ես ալ երեսս ձեռքերուս մէջ առած կուլտի :

Այսպէս սիրելի՛ս, իմ խորհուրդներս միշտ քու վրայ է, երբ քեզ մտնա ժամ մը հեռացնեմ, չեմ կրնար հանգիստ ըլլար :

* * *

Գիշեր մ'ալ, երբ պարտէզիս ծառերուն տակ նստած վրադ կը մտածէի, հեռուէն իմացայ քրքրուն ձայնդ, դարձեալ երգ մը կ'երգէիր, անանկ երգ մը՝ որ ամբողջ եռօրէնս քունդ հանեց մէջ մը բարձրացող եւ մէջ մըն ալ անհունապէս իջնող գրեթէ մաքուր մօտ ետեւերով :

Սիրտ ծակող երգիդ ազդեցութենէն կը բռնուած ծառս օտարացաւ, եւ անոր տերեւները հմայիչ սօսաւիւն մը հանեցին, իսկ ես՝ ո՛հ ես ալ սարսուցի . . . ա՛յս, աղուոր չես գիտեր որչափ յուզուեցայ ձայնէդ, աչքիս առջեւ բերի ծառի աչքերդ ու գտնուեց մա-

զերդ եւ հիաստանչ դիտեցի : Այո՛, դիտեցի քեզ բայց չի կեսացայ, ինչո՛ւ արդեօք, ո՛հ, մի հարցներ, չեմ կարող ըսել . . . :

Լուսինը կը բաւարէր վար, իր ծոցին մէջ այն գիշեր, բայց ես նստած իմ տեղս, լուսն մտիկ կ'ընէի քեզ, որովհետեւ երակներուս մէջ զգայի սառուտ մը՝ որ ամենեւնի օտար չարչարեց զիս : Արհաւիրք մը, սոսկում մը պատեց զիս, երբ դու՛ն, աղուոր, մէկէն կ'երգէիր երգդ, քու ձայնդ, այն գիշեր, սոխակիին դալկայէն ալ բաղքը եւ ի՛նչ համար . . . :

Այո՛, բաղքը ու հմայիչ է ձայնդ այն ամէն ներդաւանակ երաժշտութենէն՝ որ՝ կ'արտածուի նուրբ ու բամբ նուագներուն քելերէն :

Քեզ տեսած ժամէս ի վեր զգացի հոգիիս մէջ հասնում մը, մաշիլ մը, որ անհուն զինովցնող սերէն յառաջ կուգայ : Երբ առաջին անգամ իրարու հանդիպեցանք, գիշերս, մեր նայուածքները գամուկեցան իրարու աչքի մէջ, ու մեկզմէկ դիտեցինք անբռնիք . ծառի բիբերուդ մէջ իմ լացող հայտնայնութեան մարմնեցան եւ այն վայրկեանէն քեզ սկսայ սիրել . . . :

Դիտեմ, դուն զիս չես սիրեր, քերես ալ կ'ասես, բայց հոգ չէ, կը բաւէ որ ես կը սիրեմ քեզ : Խոցոտեցիր սիրտս, անգունը աղջիկ :

* * *

Ու երբ կ'երգէիր երգդ, եւ արձագանգը ա՛լ չկրկնուեցաւ միջոցին մէջ, իսկոյն ելայ նստած տեղէս ու սենեակս գացի տեսնուի ու տեսնուի : Պատահաբար պատկերիդ առջեւ կայնեցայ եւ սկսայ դիտել քեզ, ո՛վ կոյտերուն գեղեցիկը :

Առջիկ կայնած միջոցիս, կարծես աչքերդ ինձ կը խօսէին մեր անցեալին յիշատակներ՝ որ տոյճա՛ն հեռաւի ժամեր անցուցինք դալարազեղ հովիտներուն մէջ, նաեւ պատկերիդ կէս ժպիտը արթնացնէ միտքիս մէջ հին սերեր՝ որ սիրտս խորհալեց, ո՛հ, այդ աչքերդ եւ ժպիտդ զիս բռնաւ ըրին :

Ես տգոյն եւ դալկահար տղայ մ'եմ, լիւում :

Դիտեմ որ ամէն մարդ կը սիրէ քեզ, եւ ես իմ մեծաւոր սենեակիս մէջ նստած մըրմնջեցի, « Ինչպէս տուեցա՞նք փութերուն մէջ, անանկ ալ իմ սիրունիս իր ընկերներուն մէջ : »

ՎԱՀՐԱՄ ԱՆՈՒԲԶ

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Գիշեր ցերեկ իր գիտական աշխատութիւններուն մէջ թաղուած գիտուն մը, որ ուրիշներու հետ ալ գրեթէ բընաւ յարաբերութիւն չէր ընէր, օր մը ծառան կանչելով կը հարցընէ.

— Ինձի համար տարօրինակ մարդ մըն է կըսեն. չէ՞:

— . . .

— Ինչո՞ւ կը լռես. գիտեմ ես՝ ուրիշներուն իմ նկատմամբ ունեցած կարծիքը. կուզեմ իմանալ միայն թէ ինտո՞ր կըլլայ տարօրինակ մարդը. կրնաս ցուցնել հատ մը ինձի:

Ծառան այս անակնկալ հարցումին տակէն պէտք եղածին պէս կարենալ ելնելու համար նորէն կը լռէ ու քանի մը օր վերջը սիրուն կատակ մը ընելու մտադրութիւնով, առաջին անգամ հանդիպած պարզամիտ մարդու մը կ'ըսէ.

— Բարեկա՛մ, քեզի այսինչ գիտունը տեսնել կուզէ, կերթա՛ս.

Մարդուկը, առանց իսկ խորհելու թէ ի՞նչ գործ կրնար ունենալ այդ գիտունը իրեն հետ, մանաւանդ որ անհրապոյր մարդու մը համբաւը ունենալն ալ գիտէր անոր,

— Կ'երթամ, կը պատասխանէ անտարբերութեամբ:

Ուստի ծառան հետը առնելով այդ միամիտ մարդը, վեր կը հանէ համբաւաւոր գիտունին չքեղ ապարանքէն և առաջնորդելով զայն սենեակ մը, որուն դուռը ծածկուած էր լայն ու հաստկեկ վարագոյրով մը,

— Հո՛ն, կըսէ մատնանիշ ընելով, ու ինք կը քաշուի ուրիշ սենեակ մը:

Պարզամիտ մարդը վարագոյրը կէս մը մէկդի առնելով ներս կը խոթէ գլու-

խը և տեսնելով որ համբաւաւոր մարդը գիւրով զբաղած է, դուռս կը քաշուի նորէն՝ վարագոյրը ձգելով: Քիչ մը ետքը նոյն բանը կընէ դարձեալ՝ առանց ներս մտնելու. Գիտունը սակայն որ երկու անգամին ալ տեսած էր վարագոյրին բաց-խփումը և անծանօթին դէմքը, ոտքի կ'ենէ հետաքրքրութիւնով մը և դէպ ի դուռը կը յառաջանայ. ու, ճիշդ այն վայրկեանին, երբ վարագոյրը երրորդ անգամ կը բացուէր, դէմ գէմի կուգայ տնծանօթին հետ, որ առանց յուզումի ամենապզտիկ նշան մը ցուցնելու, կատարեալ պաշարիւնութիւնով մը կը հարցընէ.

— Դուն թմբուկ զարնել գիտե՞ս...

Գիտունը այս տարօրինակ ու անիմաստ հարցումին առջև չուարած՝

— Ձեմ գիտեր . . . կ'ըսէ. ի՞նչ պիտի ըլլայ . . .

Մեր մարդուկը միեւնոյն պաշարիւնութիւնով.

— Ես այսինչ տեղ եղբայր մը ունիմ, ան ալ չգիտեր. կ'ըսէ ու մէկ կողմ կը քաշուի:

Գիտունը որ իր ամբողջ կեանքին մէջ առաջին անգամն ըլլալով ասանկ անկուշ հիւր մը կ'ունենար, չկրնալով լուծել անոր այս անիմաստ հարցումներուն նպատակը, մատը դրան զանգակի կոճակին վրայ կը դնէ:

Ծառան այդ զանգակի ձայնին վրայ դուռս կը ցատկէ գտնուած սենեակէն ու, — իբրեւ թէ բնաւ տեղեկութիւն ունեցած չըլլար դուրսի անցուդարձէն, — կ'սկսի ապուշական ակնարկներ նետել Գիտունին ու անծանօթին երեսն ի վեր:

Եւ երբ Գիտունը լուծիւնը խզելով՝

— Ի՞նչ կը նշանակէ աս . . . կը պտուայ,

— Ձեմ գիտեր Տէր իմ, կը պատասխանէ ծառան, բայց կարծեմ ան տարօրինակ մարդն է աս, զոր տեսնել ուղած էիք:

ԶԱՒԱՆ ՄՈՅՐԵԱՆ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՕՆԸ 15

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՉ

Հրատի և երկրի միջև հաղորդակցու-
թիւնը դիտելու համար սպասելով մէկտեղ ,
Մ. Սէնթեզ կը տեսակցէր իր բարեկամներուն
հետ :

— Մտաւորական զբաղում չունիք դուք
այնպէս չէ՞, հարցուց Մեծ-ձերունի-պարոնին,
որ պատասխանեց .

— Ի՞նչ կըսէք . . . Ընդհակառակը մեծ
չափով, բայց տեսակ մը անգիտակցութեամբ
Մտածումով է որ ամենէն աւելի կ'ապրինք
մենք և ան է որ մեզի կը պատճառէ ան-
խառն հաճոյքներ : Բայց չկարծէք թէ մենք
մեր մէջ կղզիացած կ'ապրինք, ընդհակա-
ռակը գաղափարի մշտատե փոխանակու-
թեան մէջ ենք, մեր միտքը միշտ շարժման
մէջ է մեր մարմինին պէս և փոխադարձա-
բար ամենքն իրարու կը հաղորդենք մեր
գիտերը, մեր աշխատութեանց արդիւնքը,
հանրութեան օգտին համար : Այս կազմա-
կերպութեամբ առանց մտահոգութեան կ'ապ-
րինք, ինքզինքնիս կրնանք գիտութեան
նուիրել ամբողջովին : Կը տեսնէք Նախածին
թէ, մենք բաղդատմամբ ձեզի լռին ցեղ
մենք որ երկար տարիներէ ի վեր կը հետա-
պնդէ « աննիւթանալու » գաղափարը, ուր
չեմ գիտեր ո՞րքան ատենէն պիտի հասնինք,
գուցէ քանի մը հարիւր հազարեակ դարե-
րու մէջ, բացարձակ հոգեկանացումով մը :
Այժմ ոչ կուր կայ, ոչ կոչու աշխատութիւն-
ներ, ո՛չ ալ սրտմաշուք . . . : Միացեալ
մարդկութիւնը կը հանգչի :

— Զշմարտապէս երջանիկ էք, Մեծ-ձե-
րունի-պարոն, այս տեսակ կեանք մը եր-
ջանութեան իտէալը ըլլալու է : Բայց վեր-
ջին հարցում մըն ալ ընելու ներքեցէք ինձի :
Ինչպէ՞ս կազմուած է ձեր ընտանիքը : Զեր
ղաւակները տեսայ վարժարանը, իսկ անոնց
մայրերը . . . ձեր կիները . . . :

— Կոռ զացութիւնը երկար ատենէ սահ-
մանուած է մեր մէջ : Կինը ամէն կերպով
հաւասար է մեզի, մեր իրաւունքները կը
վայելէ և հակառակ պարագային ալ մեզի
հետ պատասխանատու է : Բայց պէտք է
խոստովանիլ թէ այս միութիւնը առանց
պայքարի զոյացած չէ : Պատմութիւնը մեզ
կը սորվեցնէ թէ, հին ատեն, մեր ցեղը ձե-
ւափոխող բազմաթիւ պատճառներու ազ-
դեցութեան տակ երբ մեր ուղեղները սկսան
գերիշխան վիճակ մը առնել, կիները աւելի
ջղային և նուազ հաւասարակշիռ ու պա-
տասխանատու՝ մարդկութիւնը վտանգի մէջ
մղեցին : Մեզի, էրիկ-մարդոցս հաւասար
ըլլալ չմտածելէ զատ, կուղէին իշխել, բա-
ցարձակ տիրողը ըլլալ մեր վրայ : Այսպէս
կիներու այս անհաւասարակշիռ վիճակէն ալ
ընտանիք դժոխք մը կըլլար : Կամ, ուղե-
ղային տարբերուն ներդաշնակութիւնը աւ-
րուեցաւ, կամ ջղային գերագրգիռ դրու-
թեան վիճակը անհամապատասխան եկաւ
կնոջական կազմուածքին հետ, կամ ուրիշ
ո՛ր է պատճառով մը, զոր մեր նախնիք
չէին կրցած հասկնալ, մարդիկ սարսափելի
չրջանի մը մէջ էին : Այն ատեն օրէնսգէտ-
ները հրամայեցին որ պղտիկուց արգիլուին
այս յաները, նորածին աղջիկներուն գանկը
տեսակ մը կանոնաւոր ճնշման ենթարկելով,
որպէս զի չմեծնան, չզարգանան :

— Ըսել է ձեր բոլոր կիները փոքրագը-
լուիներ, ապուշներ ըրիք . . . :

— Աւելի աղեկ են ապուշները քան թէ
հրէշները, որոնք այնչափ տառապեցուցին
մեր հայրերը, զանոնք կատաղութեան հաս-
ցնելու աստիճան :

— Դու խնդրէ՞ք չափաւորել՝ մտածումը
ջնջելու համար, ահա ինչ որ չինական է
խկապէս, ընդմիջեց Մ. Սէնթեզ : Ես ալ

ձեզի հետաքրքրական բան մը յայտնեմ: Գիտէ՞ք թէ մեր ժամանակներուն ապրող ձեր նախնիքը, գործնական մարդիկ, իրենց աղջիկներուն ոտքերը նոյնպէս կը սահմանափակէին, մեծցնել չէին տար, այնպէս որ անոնք ստիպուած տունը կը մնային:

— Ծանօթ է մեզի այդ և մեր հայրերն ալ գիտէին. գուցէ օրէնագէտները ատոր հետեւելով է որ ուղեղին զարգացման դէմ ալ նոյն արգելիչ միջոցը հրամայեցին, որ սքանչելի կերպով յաջողեցաւ: Երկար ատեն, կնոջ քով ուղեղին զարգացումը դադարեցաւ և մարդոցը, ընդհակառակը աճեցաւ, և այսպէս բնական կերպով իրենց առաւելութիւնը, տիրապետութիւնը ունեցան կիներուն վրայ: Ասկից ետք, ա'լ օրէնագէտները վերցուցին արգելքը, որով կիներուն ուղեղներն ալ սկսան աճիլ, բայց համեմատաբար այրերուն միշտ ստորադաս եղան: Այսպէս վերջ գտաւ այն ընկերային խառնակութիւնը, որ ոչ միայն կիներու գերադասութիւնը, այլ էրիկմարդոյ գերութիւնը, ստրկութիւնը պիտի կրնար առաջ բերիլ: . . . Բայց ժամանակն է որ մեկնինք հոն ուր այժմ տեղի կունենայ Հրատ մոլորակին և երկրին միջև հաղորդակցութիւնը: Վերջին ժամուն սպասեցի, որպէս զի վայրկենաբար կատարենք մեր ուղեւորութիւնը առանց փոքր վրդովում մը պատճառելու ձեզի, և մթութենէն չտեսնենք մեր անցած տեղերը: . . . Կը մեկնինք կոր նախածին: Հասանք ահա, գուցէ քանի մը վայրկեան ետք Մեծ-ծերունի-պարոնը:

— Ո՛ւր ենք, հարցուց Մ. Սէնթեզ թեթեալէս արքշուած, քունքերը քիչ մը քրտնած և կուրծքը հեւքոտ:

— Բաւական բարձրութեան մը վրայ, որպէս զի ամբողջութեամբ տեսնենք երկու մոլորակներուն հաղորդակցութիւնը:

— Ասոր համար է որ շնչառութիւնս վերադովեցաւ, ինչ որ օդի քիչութենէն առաջ կուգայ:

— Կուզե՞ս որ քիչ մը իջնենք: Մենք այնքան վարժուած ենք մթնոլորտի բարձրութեանց մէջ պատելու որ շատ քիչ անհանդիստ կըլլանք: Հիմա, ըսէք, տեսնեմ ի՞նչ կը տեսնէք ձեռքէ վար:

— Լուսինին լոյսին շնորհիւ ճերմակ դաշտ

մը կը տեսնեմ, այնքան ճերմակ որ կարծես ձիւնով ծածկուած է:

— Տեսքը ճիշդ է, բայց ձիւն չէ, այլ ճերմակ կտաւ մը: . . .

— Կտաւ մի՞ . . . այդչափ ընդարձակ տեղ մը ծածկելու չափ: . . .

— Այո՛, դեռ շատ բան պիտի տեսնէք: Ուրիշ ի՞նչ կը նշմարէք նայինք:

— Բաւական տարածուն լոյս մը որ սակայն անբաւական է լուսաւոր նշան մը համարուելու: Բայց, կեցեք . . . ճերմակ դաշտը յանկարծ կորսուեցաւ և տեղի տուաւ սևի սև անսահման բիծի մը: Լոյսն ալ կը մարի, և սև բիծն ալ իր կարգին կ'անհետանայ և ճերմակ դաշտը դարձեալ կերեւայ, լոյսն ալ նորէն կը ծնի: . . .

— Լաւ, աս է ամէնքը: Հրատի հաղորդակցութիւնները սկսան և պատասխան պիտի տան հիմա մեր դրացիները, որոնք իրենց կարգին՝ մեր մոլորակին վրայ պիտի ուղղեն իրենց տեսողական լաւագոյն գործիքները:

— Աստղաբանական դիտարանի մը չըրջակայքն ենք, այնպէս չէ՞ յարեց Մ. Սէնթեզ:

— Այո, և երկրիս ամենէն լաւագոյն և լաւ կազմակերպուած դիտարանին մօտ:

— Կը փափաքիմ անգամ մը այցելել հոն:

— Ի՞նչ մը ետք այդ փափաքդ ալ կը գոհանայ նախածին, երբ աղէկ մը տեղեկանաս այն նախնական շարժումներուն և գործողութեանց որով մեր մտածումները կը փոխանակենք Հրատի հետ, հակառակ մեզ անկից անջատող անհուն հեռաւորութեան:

Պահ մը լուութիւն տիրեց: Այդ բարձրութեան վրայ կեցած, Մ. Սէնթեզ կը դիտէր անձնող դարձող տարօրինակ երեւոյթները, հասկնալու համար թէ իր ժամանակները ներքնապէս անծանօթ այդ մոլորակէն, ի՞նչ ձեւով պիտի խօսին:

(Շարունակելի)

Արտօգատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Եասէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Ոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ տուկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձեռնուան յատուկ ընտիր հաղուստներու, կանանց քէյրոհներու և տղայոց չիք և դիմացկուն ֆօքսիւններու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հաղուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրէ Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.


34—50

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՑԵՐ

Կ. Պալիս, ՊահճեԴափու, ձեյաղ-Պեյ խան, քիւ. 10

Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳՍՐԱՆԱՑ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Բ Ա Ր

Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամֆօնի
եւ Էրկկոլմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Դաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտիի կից, Եալոզգ խանի տակ
քիւ. 2: Մասնաճիւղ Պահճե Դաբու-
քիւ. 52:



Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բաղմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆօններ և Էրկկոլմ ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք միջիլ հրապարակել վրայ
դռնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի տուաւերու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հողածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել
Կեդրոնատեղին: